ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/42

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00071045) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով «բժշկական պարագաների» գնման ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն: Մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրելէիր կողմից առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը: Ուսումնասիրության արդյունքում, ինչպես նաև հիմք ընդունելով պատասխանատու տորաբաժանման կողմից ներկայացված համապատասխան մասնագիտական եզրակացությունները՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին (համարժեք չեն): Մասնակիցը ծանուցվել է դրա վերաբերյալ, և վերջինիս առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը որպես շտկում սահմանված կարգով ներկայացրել է նոր տեխնիկական բնութագիր և պարզաբանումներ, որոնք նույնպես հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես հրավերի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք և մասնակցի հայտը մերժվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ Նորայր Հարությունյանը:

3. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 11.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը. «Ի պատասխան ՀՀ ՊՆ 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրության տեղեկացնում ենք Ձեզ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն իր անհամաձայնությունն է հայտնում ինչպես այդ գրությունում առկա առաջարկին՝ «Խաչպար» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, այնպես էլ այդ առաջարկի համար հիմք հանդիսացած ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագրերում առկա եզրակացություններին:

Ներկայացնում ենք մեր անհամաձայնության փաստացի և իրավական հիմքերը՝

1) ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագրերում առկա՝ թիվ 7, 8, 9, 10 և 15-րդ չափաբաժիններին վերաբերվող եզրակացությունները, որոնք հիմք են հանդիսացել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի համար, պարունակում են հղում առ այն, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չներկայացված հստակեցումները վերաբերվում են «վիրաբուժական կարանյութերին ներկայացնող հիմնական պարամետրերին»:

Դա չի համապատասխանում իրականությանը, ինչը ապացուցվում է հենց Պատվիրատուի կազմած հրավերի 1-ին Մասի՝ «Գնման առարկաների բնութագրերը» բաժնի՝ թիվ 7, 8, 9, 10 և 15-րդ չափաբաժինների անվանումներից, որտեղ ընդհանրապես չկան ՀՀ ՊՆ պատասխանատու ստորաբաժանման կողմից «վիրաբուժական կարանյութերին ներկայացնող հիմնական պարամետրեր» համարվածներից և ոչ մեկի առկայության պահանջները:

Այդ «վիրաբուժական կարանյութերին ներկայացնող հիմնական պարամետրեր»-ը բազմաթիվ այլ նոր պարամետրերի հետ միասին առկա են Պատվիրատուի հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական հատկանիշներ»-ի համապատասխան սյունակներում :

2) Պատվիրատուի ներկայացրած հարցումների արդյունքներում՝ որպես վիրաբուժական կարանյութերի նախընտրելի արտադրող տրված է «Ethicon» ֆիրմայի անվանումը:

Ձեզ եմ ներկայացնում «Ethicon» ֆիրմայի արտադրության՝ Պատվիրատուի Հրավերի թիվ 8 և 9 չափաբաժինների անվանումներին համապատասխանող կարանյութերի տուփերի լուսապատճենները, որտեղ արտադրողի կողմից տրված են այն բոլոր հիմնական պարամետրները, որոնք անհրաժեշտ են տվյալ վիրաբուժական կարանյութերի (ինչպես նաև մնացած բոլոր տեսակի կարանյութերի) իդենտիֆիկացման համար: «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից համարակալված են Պատվիրատուի համար էտալոնային համարվող «Ethicon» ֆիրմայի կարանյութերի տուփերի վրա առկա հիմնական պարամետրերը, որոնց համեմատումը Պատվիրատուի հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական հատկանիշներ»-ի սյունակներում առկա տվյալների հետ փաստում են, թե հրավերում առկա որ պարամետրներն են հիմնական համարվում՝ ըստ «Ethicon» ֆիրմայի:

3) Վիրաբուժական կարանյութերի բազմաթիվ պարամետրերից «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 1-6 նշումներով համարակալված պարամետրերի հիմնական, վճռորոշ և համընդհանուր լինելը առողջապահության ոլորտի մասնագետների համար ապացուցվում

է նաև Երևանի Պետական Բժշկական Համալսարանի կողմից, որը 2017թ. փետրվարի 8-ին մրցույթ էր հայտարարել տարբեր տեսակների կարանյութերի ձեռքբերման համար, որտեղ «տեխնիկական բնութագրեր» սյունակներում առկա են բազմաթիվ պարամետրների թվարկումներ, որպիսիք առկա են նաև ՀՀ ՊՆ-ի «տեխնիկական հատկանիշներ» սյունակներում: «Խաչպար» ՍՊԸ-ն համարվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից թիվ 21, 22, 23, 25, 26, 28 և 36-րդ չափաբաժինների մասով, որոնց տեխնիկական բնութագրերի համար 22.02.2017թ. ներկայացրել է Հավելված թիվ 5-ը, որի «Համառոտ տեխնիկական բնութագիր» սյունակներում առկա տվյալները ամբողջությամբ համարժեք են ինչպես ՀՀ ՊՆ-ին 26.05.2017թ. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված թիվ 5-ի տվյալներին, այնպես էլ ՀՀ ՊՆ-ի համար էտալոն հանդիսացող «Ethicon» ֆիրմայի կարանյութերի տուփերի վրա առկա տվյալներին): Այդտեղ նույնպես բացակայում են այն տվյալները, որոնք ՀՀ ՊՆ-ի կողմից համարվում են «վիրաբուժական կարանյութերին ներկայացնող հիմնական պարամետրներ», և որոնց բացակայությունը ՀՀ ՊՆ-ի համար հիմք է հանդիսացել մերժելու «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և ՀՀ ֆինանսների նախարարություն դիմելու, սակայն ԵՊԲՀ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից որպես հիմնական պարամետրեր համարվել են հենց վերոնշյալ 6 պարամետրերը, դրանք համարվել են համարժեք և բավարար տվյալներ, որոնց համադրման արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել թիվ 21, 22, 23, 25, 26, 28 և 36-րդ չափաբաժինների մասով, որից հետո ԵՊԲՀ-ն «Խաչպար» ՍՊԸ-ի հետ 2017թ. մարտի 7-ին կնքել է վիաբուժական կարանյութերի մատակարարման թիվ «ՇՀԱՊՁԲ-15/16-1-2017-ՀՄ-ԵՊԲՀ» պայմանագիրը:

4) 2017թ. մայիսի 22-ից հետո «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենին հրավիրել են ՀՀ ՊՆ, որտեղ նա ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ պետ, գնդապետ Վ. Գասպարյանի կաբինետում բանավոր տեղեկացվել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկած գները բարձր են, անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել գները, որպեսզի «Խաչպար» ՍՊԸ-ն հաղթող ճանաչվի և նրա հետ մատակարարման պայմանագիր կնքվի: «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը համաձայնվել է 15 տոկոսով նվազեցնել առաջարկված գները՝ 1 միավորի արժեքը 610 դրամից դարձնելով 518,5 դրամ: Այդ մասին պարոն Վ. Գասպարայանի հանձնարարությամբ նրա աշխատակցուհին կազմել է համապատասխան գրություն՝ ուղղված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՊԵՏԻ ՊԺԿ պարոն Կ. Կարապետյանին, որը կնքվել և ստորագրվել է «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենի կողմից, որից

հետո «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենին առաջարկվել է այդ փոփոխված գներով ներկայացնել Հավելված թիվ 5-ը:

5) 26.05.2017թ. «Խաչպար» ՍՊԸ-ն ՀՀ ՊՆ-ին է ներկայացրել փոփոխված գներով Հավելված թիվ 5-ը՝ իր կողմից առաջարկված կարանյութերի տեխնիկական բնութագրերով, որոնք և՛ համապատասխանում են Պատվիրատուի համար էտալոնային համարվող «Ethicon» ֆիրմայի կարանյութերի հիմնական պարամետրերին, և՛ ամբողջությամբ նույն թվային մեծություններն են, ինչը պահանջվում է Պատվիրատուի հրավերով:

21.06.2017թ. Պատվիրատուն ծանուցել է «Խաչպար» ՍՊԸ-ին, որպեսզի հստակեցվեն ապրանքների տեխնիկական բնութագրերը, որին նույն օրն էլ տրվել է պատասխանը, իսկ 2017թ. օգոստոսի 2-ին էլ ՀՀ ՊՆ է ներկայացրել կարանյութեր արտադրողի կողմից տրամադրված POLYPROPYLENE MONOPHILAMENT վիրաբուժական կարանյութի որակի սերտիֆիկատները, որի 2-րդ էջի թիվ 4 կետում նշված է, որ նրանք համապատասխանում են ամերիկյան և եվրոպական ստանդարտներին:

6) Պատվիրատուն «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, և սահմանված կարգով փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

7) 23.08.2017թ. ՀՀ ՊՆ-ն թիվ ԴՎԱ/2788 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Խաչպար» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, ինչը կատարել է սահմանված Կարգի խախտումով, քանի որ համաձայն Կարգի 122-րդ կետի 2-րդ պարբերության սահմանման՝ «Ընդ որում, մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար պատվիրատուն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի հայտնաբերման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ կից ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը», մինչդեռ այս գործընթացներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից թույլ չեն տրվել «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջների խախտումներ՝ այսինքն չկան նման հիմքեր:

[illegible] վերոգրյալներից՝ խնդրում ենք մերժել «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով»:

Ի լրումն 11.09.2017թ. Խորհրդին ուղղված գրության, Ընկերությունը 15.09.2017թ. ներկայացված գրությամբ մասնավորապես հայտնել է.

«ՀՀ ՊՆ-ն ՀՀ Կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված Կարգի 71-րդ կետի, ինչպես նաև <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16>> ծածկագրով մրցույթի հրավերի 1-ին մասի 8.5 կետի սահմանումներից ելնելով, ՀՀ ՊՆ-ն վիրաբուժական կարանյութերի մասին հարցումներ է կատարել <<Արմենիա>> ՀԲԿ ԲԿ-ին և <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> ԲԿ-ին՝ նրանց համարելով որպես իրավասու մարմիններ, որոնց բարձր մասնագիտական մակարդակին քաջատեղյակ լինելով, <<Խաչպար>> ՍՊԸ-ն ևս նրանց կարծիքը ընդունում է որպես իրավասու մարմնի կարծիք: Բողոքարկման Խորհրդի ուշադրությունն եմ հրավիրում այն փաստերի վրա, որ ՀՀ ՊՆ-ի կողմից ներկայացված իրավասու մարմինների կարծիքներում ոչ մի բառ անգամ չկա այն մասին, որ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից Պատվիրատուին ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում կամ համարժեք չեն մրցույթի հրավերի պահանջներին, իսկ <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալները չեն որակվել որպես իրականությանը չհամապատասխանող՝ ինչը պահանջվում է ինչպես Կարգի 71-րդ կետի, այնպես էլ Պատվիրատուի հրավերի 1-ին մասի 8.5 կետի սահմանումներից ելնելով, այսինքն՝ բացակայում են այդ սահմանումներով պահանջված հիմքերը:

ՀՀ ՊՆ-ի ենթակայության տակ գտնվող կառույցների կողմից ներկայացված զեկուցագրերը չեն կարող համարվել իրավասու մարմինների կարծիքներ:

Ելնելով վերոգրյալներից՝ կրկին անգամ խնդրում ենք մերժել <<Խաչպար>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը՝ հիմքերի բացակայության հիմքով»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Սմբատ Բալասանյանը:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2017/42 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությունը և կից նյութերը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 30.03.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 3 և 31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունները, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության կողմից ներկայացված եզրակացությունը Ընթացակարգի մասնակիցների որակավորման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ, Ընկերության 11.09.2017թ. և ներկայացված դիրքորոշումը և ի լրումն դրան 15.09.2017թ. ներկայացված գրությունը, Ընկերության կողմից ներկայացված՝ «Հուաիյին Բժշկական Սարքավորումներ Քո.» ՍՊԸ-ի ստուգման զեկույցը (թարգմանություն անգլերենից), ինչպես նաև Խորհրդին ուղղված 27.09.2017թ. գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 7-10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (7-10-րդ և 15-րդ) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերին:

Հանձնաժողովը 30.03.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ 7-րդ, 8-րս, 9-րդ 10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի 7-րդ, 8-րս, 9-րդ 10-րդ և 15-րդ չափաբաժինների մասով հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը սահմանվել են հետևյալ կերպ.

7. Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 2-0 /Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից: Թելը ներկված է երկնագույն՝ վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ կամ համարժեք-համաձուլվածքը պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև: Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Н/см որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը: Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով: Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը ծակող 31 մմ, թելի երկարությունը 75 սմ/:

8. Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 3-0 /Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից: Թելը ներկված է երկնագույն՝ վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ կամ համարժեք-համաձուլվածք պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև: Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս

քան 4,6 Н/см որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը: Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով: Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով: Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը ծակող 22 մմ, թելի երկարությունը 75 սմ/:

9. Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից (0) / Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից: Թելը ներկված է երկնագույն՝ վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ կամ համարժեք-համաձուլվածքը պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուավածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Н/см որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով: Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց

և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո: Ասեղը ծակող 40 մմ, թելի երկարությունը 100 սմ/:

10. Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից (1) / Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից: Թելը ներկված է երկնագույն վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ կամ համարժեք- համաձուլվածք պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև: Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Н/см որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը:Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով:Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո:Ասեղը ծակող 40 մմ, թելի երկարությունը 100 սմ/:

15. Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից (4-0) /Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից:Թելը ներկված է երկնագույն՝ վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքը Էտալոյ կամ համարժեք- համաձուլվածք պատված է սիլիկոնով որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև:Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ ոչ պակաս քան 4,6 Н/см որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը: Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է , ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան

ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով: Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով: Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուր նյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի, ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո: Ասեղը ծակող 17 մմ, թելի երկարությունը 75 սմ/:

Ընկերությունը 26.05.2017թ. ընթացակարգին ներկայացված հայտի N5 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրն ըստ համապատասխան չափաբաժինների՝ հետևյալ կերպ.

7. POLYPROPYLENE MONOPHYLAMENT 2/0, 75 սմ, ծակող ասեղ 31 մմ;
8. POLYPROPYLENE MONOPHYLAMENT 3/0, 75 սմ, ծակող ասեղ 22 մմ;
9. POLYPROPYLENE MONOPHYLAMENT 0, 100 սմ, ծակող ասեղ 40 մմ;
10. POLYPROPYLENE MONOPHYLAMENT 1, 100 սմ, ծակող ասեղ 40 մմ;
15. POLYPROPYLENE MONOPHYLAMENT 4/0, 75 սմ, ծակող ասեղ 17 մմ:

31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 16.06.2017թ. տրված մասնագիտական եզրակացությունները, արձանագրել է, որ «առաջարկված բոլոր չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ կազմակերպության կողմից ներկայացված բնութագրերով չի հստակեցվում վիրաբուժական կարանյութերին ներկայացվող պահանջները, ուստի հնարավոր չէ լիարժեք պատկերացում կազմել ապրանքների որակական հատկանիշների մասին:

Նույն արձանագրությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 51-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին,

մասնավորապես՝մանրամասնել բնութագրերը՝ հրավերի տեխնիկական բնութագրերին համապատասխան:

Հանձնաժողովը 21.06.2017թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ծանուցման մեջ նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են պահանջված փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կազմակերպության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը համարժեք չեն մրցույթի հրավերի պահանջներին և չեն արտացոլում վիրաբուժական կարանյութերին ներկայացնող հիմնական պարամատրերը, մասնավորապես.

հստակեցված չէ կարանյութի ասեղի հատուկ ծածկույթի առկայությունը, որն անհրաժեշտ է հյուսվածքների տրավմատիզացիան կանխելու համար;

հստակեցված չէ ասեղների համաձուլվածքը, որն անհրաժեշտ է վիրաբուժական կարանյութերի ասեղներին ներկայացվող բնութագրիչները գնահատելու համար;

հստակեցված չէ կոշտ ներդիրի առկայությունը, որն անհրաժեշտ է վիրաբուժական կարանյութերի «ձևի հիշողության էֆեկտի» կանխման համար;

հստակեցված չէ ասեղին միացման հատվածում թելի և ասեղի տրամագծերի հարաբերակցությունը, որն անհրաժեշտ է թելի հեշտ անցումը հյուսվածքներով և վերջիններիս քիչ տրավմատիզացիան ապահովելու համար:

15.09.2017թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2788 գրությամբ հայտնած դիրքորոշումն այն մասին, որ Ընկերության հայտը մերժվել է վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի հրավերով սահմանված պահանջներին արձանագրված անհամապատասխանությունները սահմնված ժամկետում չշտկելու հիմնավորմամբ: Մասնավորապես, ՀՀ ՊՆ ներկայացուցիչն անդրադարձավ այն հանգամանքին, որ Ներության հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայել են Ընթացակարգի հրավերով նախատեսված մի շարք պարամետրերի՝ մասնավորապես, վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքի բաղադրակազմին, դրանց հատուկ սիլիկոնե ծածկույթի առկայութանը, ասեղին միացման հատվածում թելի և ասեղի տրամագծերի հարաբերակցությունը և այլնի

վերաբերյալ տվյալները, ինչը հնարավորություն չի տվել Պատվիրատուին սպառիչ պատկերացում կազմել ապրանքների որակական հատկանիշների մասին:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողովը 21.06.2017թ,. Ընկերությանն ուղարկված ծանուցմամբ առաջարկել է վերջինիս շտկել նշված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով լրացուցիչ տեղեկատվություն, ինչից հետո, սակայն, Ընկերությունը չի կատարել նշված շտկումը:

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը պնդեց 11.09.2017թ. և 15.09.2017թ. Խորհրդին ուղղված գրություններով ներկայացված դիրքորոշումը և հավելեց, որ ի պատասխան Պատվիրատուի 21.06.2017թ. ծանուցմանը, վերջինիս ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ Ընկերության կողմից առաջարկվող կարանյութերին վերաբերող տվյալները համապատասխանում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի մի շարք պարամետրերին և հավաստիացրել, որ Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչվելու դեպքում Պատվիրատուին կներկայացնի մատակարարվող կարաթելերի արտադրողի կողմից տրված որակի սերտիֆիկատները:

Խորհրդի այն հարցին, արդյո՞ք Ընկերության հայտով առաջարկվող ապրանքները համապատասխանում են Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված հատկանիշներին (մասնավորապես, վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքի բաղադրակազմին, դրանց հատուկ սիլիկոնե ծածկույթի առկայությանը, ասեղին միացման հատվածում թելի և ասեղի տրամագծերի հարաբերակցությունը և այլնին), Ընկերության տնօրենը պատասխանեց, որ տվյալ պահին հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում ներկայացված հատկանիշներից բացի որևիցէ լրացուցիչ տեղեկատվության չի տիրապետում, թեև ընդունեց, որ Ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերում Հրավերով նախատեսված մի շարք պարամետրեր բացակայում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ 1-ին տեղը

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը,

• 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

• 49-րդ կետի համաձայն՝ (...) ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 51-րդ կետի համաձայն՝առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ g.tovmasyan@mil.am, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Հրավերի 7.7 կետի համաձայն՝...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և նույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության հայտով առաջարկվող ապրանքները տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին՝ մասնավորապես, բացակայում են տվյալներ վիրաբուժական կարանյութերի ասեղների համաձուլվածքի բաղադրակազմի, դրանց հատուկ սիլիկոնե ծածկույթի առկայության, կոշտ ներդիրի առկայության, ասեղին միացման հատվածում թելի և ասեղի տրամագծերի հարաբերակցության և այլնի վերաբերյալ:

Հրավերի 8.14 կետով նախատեսվել է, որ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների (եթե ընթացակարգն ունի մեկից ավելի չափաբաժիններ):

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի 31.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրված անհամապատասխանությունների նկարագրությունը տարանջատված չէ ըստ առանձին չափաբաժինների, ինչը թույլ չի տալիս միանշանակ ընկալել, թե Ընկերության հայտով ներկայացված որ կոնկրետ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրին են վերաբերում Հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունները:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը չի կատարել Կարգի 49-րդ, ինչպես նաև Հրավերի 7.7-րդ կետերով սահմանված՝ մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում հայտնաբերված անհամապատասխանությունները հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրելու պահանջը:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը խախտել է Կարգի 49-րդ, նչպես նաև Հրավերի 7.7 կետերով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս կողմից Ընկերությանն ուղարկված ծանուցմանը կից նիստի արձանագրությունը չի պարունակել գնահատման արդյունքում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների սպառիչ և մանրամասն նկարագրությունն՝ ըստ առանձին չափաբաժինների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15725-17 գրությամբ «Խաչպար» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**